# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 28 » հունիսի 2018 թ. N 126-Ա

## ԱԴԵԼԻՆԱ ԷԴԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի, 84-րդ հոդվածի 1-ին մասի, 95-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման N 3 հավելվածի 69-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը

կարգադրում եմ՝

1. 2018 թվականի հունիսի 28-ից, մինչև սահմանված կարգով դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացումը և տնօրենի ընտրվելը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Ադելինա Էդիկի Սահակյանին՝ կնքելով ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ